



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգադ թիվ 16480/13)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

26 մարտի 2024 թ.

*Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

**Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),  
հանդես գալով Կոմիտեի հետեյալ կազմով՝

Թիմ Այքը [Tim Eicke]՝ Նախագահ,

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Անա Մարիա Գեռա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ,*

եւ Վալենտին Նիկոլեսկու [Valentin Nicolescu]՝ *Բաժանմունքի քարտուղարի  
տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության  
մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն 1938 թվականին  
ծնված Հայաստանի քաղաքացի պրն Հենրիկ Հովհաննիսյանի (դիմումատու)  
կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2013 թվականի փետրվարի 27-ին  
Դատարան ներկայացված գանգառը (թիվ 16480/13). դիմումատուին  
ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Կ.Մեժլումյանը,

գանգառի մասին Հայաստանի կառավարությանը (Կառավարություն), որին  
ներկայացնում է լիազոր ներկայացուցիչ, Միջազգային իրավական հարցերով  
Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պարոն Ե. Կիրակոսյանը,  
ծանուցելու վերաբերյալ որոշումը,

կողմերի դիտարկումները,

2024 թվականի մարտի 5-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԳՈՐԾԻ ԱՌԱՐԿԱՆ

1. 1992 թվականին Արեադաշտ գյուղի տեղական մարմինները (Ժողովրդական պատգամավորների քաղաքային խորհրդի գործադիր կոմիտե) հողակտոր են հատկացրել դիմումատուին: Նրան տրվել է սեփականության իրավունքի ժամանակավոր վկայական, որտեղ նշված է, որ այն պետք է փոխանակվի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի հետ:

2. 1997 թվականին տեղական մարմինները տվել են վկայական, որը հաստատում է, որ դիմումատուին հատկացվել է հողակտոր, եւ որ սկսած 1991 թվականից նա կատարել է մի շարք բարելավումներ՝ հորատել է ջրհոր, կառուցել բնակարան, անասնագոմ եւ թռչնանոց եւ մրգատու ծառեր տնկել:

3. 2011 թվականի հոկտեմբերի 3-ին դիմումատուն դիմել է Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ սույն հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու խնդրանքով: Նրա դիմումը մերժվել է այն հիմքով, որ համաձայն Կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1555-Ն որոշման (Որոշում)՝ պետությունը հողատարածքի սեփականության իրավունքը, այդ թվում՝ նաեւ տվյալ հողակտորի մասով, փոխանցել է Արեադաշտ գյուղի տեղական համայնքին, որն այնուհետեւ օտարել է այն երրորդ կողմի:

4. Դիմումատուն իրեն հատկացված հողակտորի մասով որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ պատճառաբանելով, որ Կառավարությունն իր սեփականությունը հանդիսացող հողակտորն օտարելու իրավասություն չունի: Իր հայցադիմումը հիմնավորելու նպատակով դիմումատուն հիմնվել է 1991 թվականի հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի վրա, համաձայն որի տվյալ ժամանակահատվածում հողի օտարումն իրականացվել է Ժողովրդական պատգամավորների քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեների կողմից, ինչպես նաեւ 2001 թվականի հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ կետի,

որով սահմանվում էր, որ մինչեւ 1999 թվականի մայիսի 6-ը հանձնված կամ ստացված հողատարածքի նկատմամբ իրավունքներ շնորհող պաշտոնական փաստաթղթերը պահպանում էին իրենց օրինական ուժը, ենթակա չէին վերագրանցման եւ համարվում էին գործարքների իրավական հիմք: Նա նաեւ հիմնվել է 1995 թվականի Սահմանադրության 28-րդ հոդվածի վրա եւ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վրա, որով պահանջվում է սեփականությունից զրկելու դատական ընթացակարգ:

5. 2012 թվականի հունվարի 16-ին Վարչական դատարանը մերժել է հայցադիմումի ընդունումը իրավասության բացակայության հիմքերով՝ պատճառաբանելով, որ դիմումատուն չի նշել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող որեւէ իրավական ակտ, որի հետ կարող է Կառավարության որոշումը լինել անհամատեղելի, ինչպես պահանջվում էր Վարչական դատավարության օրենսգրքի (ՎԴՕ) 135-րդ հոդվածով:

6. Դիմումատուի վերաքննիչ բողոքի հիման վրա Վարչական վերաքննիչ դատարանը բեկանել է 2012 թվականի հունվարի 16-ի որոշումը եւ գործն ուղարկել նոր քննության՝ գտնելով, որ Վարչական դատարանը պետք է հայցադիմումի ընդունումը մերժելու փոխարեն՝ հայցի թերությունները վերացնելու նպատակով հայցադիմումը վերադարձնել դիմումատուին:

7. 2012 թվականի մայիսի 2-ին Վարչական դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին (տե՛ս վերը նշված 6-րդ պարբերությունը), մերժել է հայցադիմումը վարույթ ընդունել (վերադարձնել): Դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել:

8. Միեւնույն ժամանակ, 2012 թվականի հունիսի 1-ին դիմումատուն ներկայացրել է փոփոխված հայցադիմում՝ նշելով նույն փաստարկները (տե՛ս վերը նշված 4-րդ պարբերությունը):

9. 2012 թվականի հունիսի 8-ին Վարչական դատարանը մերժել է փոփոխված բողոքը վարույթ ընդունել՝ համարելով, որ դիմումատուն չի վերացրել իր սկզբնական հայցադիմումի թերությունները: Դիմումատուն այդ որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել:

10. 2012 թվականի հուլիսի 11-ին Վարչական վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել 2012 թվականի մայիսի 2-ի որոշումը (տե՛ս վերը նշված 7-րդ պարբերությունը): Այն գտել է, որ դիմումատուն չի կատարել ՎԴՕ-ի 135-րդ հոդվածով սահմանված հիմնական պահանջը, քանի որ այն չի նշել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտ, որի հետ վիճարկվող Որոշումը ենթադրաբար անհամատեղելի է: Քանի որ դիմումատուն հղում է կատարել Սահմանադրությանը եւ Կոնվենցիային, Վերաքննիչ դատարանը նշել է, որ կառավարության որոշումների սահմանադրականության վերաբերյալ վեճերը պատկանում են Սահմանադրական դատարանի իրավասությանը, մինչ ՎԴՕ-ի 135-րդ հոդվածը վերաբերում է միայն ներպետական իրավունքին եւ ոչ միջազգային պայմանագրերին, ներառյալ՝ Կոնվենցիան:

11. 2012 թվականի հուլիսի 23-ին Վարչական վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել 2012 թվականի հունիսի 8-ի որոշումը նույն հիմքով, այն է, որ դիմումատուն չի վերացրել իր հայցադիմումի թերությունները (տե՛ս վերը նշված 9-րդ կետը):

12. 2012 թվականի հուլիսի 11-ի եւ 23-ի որոշումների դեմ դիմումատուի վերաքննիչ բողոքները (տե՛ս վերը նշված 10-րդ եւ 11-րդ պարբերությունները) Վճռաբեկ դատարանի կողմից անընդունելի են ճանաչվել 2012 թվականի օգոստոսի 8-ի եւ 22-ի համապատասխան որոշումներով: 2012 թվականի օգոստոսի 22-ի որոշումը դիմումատուին է հանձնվել 2012 թվականի սեպտեմբերի 5-ին:

13. Դիմումատուն բողոք է ներկայացրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով՝ իրեն հողատարածքից զրկելու

որոշումը վիճարկելու նպատակով դատարանի մատչելիության իրավունք չունենալու եւ դրա հետեւանքով իր գույքային իրավունքի խախտման վերաբերյալ:

#### ԴԱՏԱՐԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

#### I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

14. Դատարանն առաջին հերթին նշում է, որ դիմումատուն մահացել է 2015 թվականին՝ զանգատը ներկայացնելուց հետո: Դիմումատուի մահից հետո նրա որդին՝ պրն Հրաչյա Հովհաննիսյանը, ցանկություն է հայտնել հարուցել վարույթն իր անունից: Կառավարությունը չի առարկել, որ վերջինս իրավասու է ներկայացնելու սույն զանգատը: Հաշվի առնելով ներկայացված փաստաթղթերը եւ նախադեպային իրավունքի համապատասխան սկզբունքները՝ Դատարանն ընդունում է, որ պրն Հրաչյա Հովհաննիսյանն ունի անհրաժեշտ հայցային իրավունակություն՝ մահացած դիմումատուի անունից վարույթն իրականացնելու համար (տե՛ս Մնացականյանն ընդդեմ Հայաստանի գործը, թիվ 2463/12, կետեր 39-43, 2022 թվականի դեկտեմբերի 6): Այնուամենայնիվ, հարմարությունից ելնելով՝ Դատարանը կշարունակի սույն վճռում որպես դիմումատու նկատի ունենալ պրն Հենրիկ Հովհաննիսյանին (տե՛ս նույն տեղում, կետ 43):

15. Կառավարությունը պնդել է, որ 6-րդ հոդվածը կիրառելի չէր սույն վարույթի դեպքում: Միջամտությունը դիմումատուի գույքային իրավունքներին, եթե այդպիսիք գոյություն ունեն, տեղի է ունեցել այն ժամանակ, երբ գյուղական համայնքը հատկացված հողատարածքը վաճառել է երրորդ կողմի, կամ երբ Անշարժ գույքի պետական ռեգիստրը հրաժարվել է գրանցել նրա սեփականությունը: Դիմումատուի կողմից հարուցված վարչական վարույթի արդյունքը չի կարող ուղղակիորեն ազդել հողատարածքի նկատմամբ նրա

գույքային իրավունքների վրա, եթե այդպիսիք գոյություն ունեն, հաշվի առնելով, որ Որոշման հնարավոր անվավեր ճանաչումը միայն կհանգեցնի պետությանը վիճահարույց գույքի վերադարձին: Նույն պատճառներով Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

16. Դիմումատուն ներկայացրել է, որ Որոշումը վարչական դատարաններում վիճարկելը միակ միջոցն է վերականգնելու իր խախտված գույքային իրավունքները: Հետեւաբար Որոշումն անվավեր ճանաչելու նրա հայցադիմումն այնքանով, որքանով դա վերաբերում էր այդ հողակտորին, որը նա պնդում էր, որ հանդիսանում է իր գույքը, պատշաճ միջոց էր գյուղական համայնքից իր գույքը վերադարձնելու համար, որն իր հերթին այն օտարել էր երրորդ կողմի:

17. Դատարանը նշում է, որ որոշման հիման վրա 1992 թվականին դիմումատուին հատկացված հողատարածքը (տե՛ս վերը նշված 1-ին կետը) հայտնվել է Արեւադաշտ գյուղի տեղական համայնքի տիրապետության տակ, որն այնուհետեւ օտարել է հողակտորը երրորդ կողմին (տե՛ս վերը նշված 3-րդ պարբերությունը): Ըստ դիմումատուի՝ իրեն այս մասին հայտնել են միայն 2011 թվականին, երբ նա դիմել է հողի սեփականության իրավունքի պետական գրանցման համար (ըստ ամենայնի՝ նրան չի հաջողվել 1992 թվականին իրեն տրված սեփականության ժամանակավոր վկայականը փոխարինել վերջնականով):

18. Դատարանը նաեւ նշում է, որ Վարչական դատարան ներկայացրած իր հայցադիմումում դիմումատուն վկայակոչել է 1991 եւ 2001 թվականների հողային օրենսգրքերի համապատասխան հոդվածները՝ ըստ էության պնդելով, որ հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման ձախողումն իրեն չի զրկել նրա սեփականության իրավունքից, հետեւաբար տվյալ հողատարածքը չէր կարող համարվել պետության սեփականություն, որպեսզի

կառավարությունն իրավունք ունենար այն որպես այդպիսին հատկացնել տեղական համայնքին (տե՛ս վերը նշված 4-րդ պարբերությունը):

19. Որպեսզի քաղաքացիաիրավական հայեցակետով 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի լինի, պետք է առկա լինի «վեճ» (ֆրանսերեն տեքստում՝ «վիճարկում» [contestations]) իրավունքի կապակցությամբ, որի վերաբերյալ առնվազն վիճելի հիմքերով կարելի է ասել, որ այն ճանաչվում է ներպետական իրավունքով՝ անկախ այն նրանից, թե արդյոք տվյալ իրավունքը պաշտպանված է Կոնվենցիայով: Վեճը պետք է լինի անկեղծ եւ լուրջ, այն կարող է կապված լինել ոչ միայն իրավունքի փաստացի գոյության, այլ նաեւ դրա շրջանակի եւ իրականացման եղանակի հետ, եւ ի վերջո վարույթի ելքը պետք է ուղղակիորեն որոշիչ լինի խնդրո առարկա իրավունքի համար, թույլ կապերը կամ հեռակա հետեւանքները բավարար չեն 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառության համար (տե՛ս, ի թիվս շատ այլոց, Գրգեդան ընդդեմ Լեհաստանի գործը [ՄՊ], թիվ 43572/18 կետ 257, 2022 թվականի մարտի 15, հետագա հղումներով): Երբ որոշվում է, թե արդյոք առկա է դիմումատուի պահանջած իրավունքի իրավական հիմքը, Դատարանը պետք է միայն պարզի, թե արդյոք դիմումատուի փաստարկները բավականաչափ համոզիչ էին, այլ ոչ թե անպայմանորեն նրա հաջողության հասնելու փաստը, եթե իրեն դատարանի մատչելիության իրավունք տրվեր (նույն տեղում, կետ 268):

20. Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները (տե՛ս վերը նշված 17-րդ պարբերությունը), ինչպես նաեւ ներպետական իրավունքի դրույթները, որոնց վրա հիմնվում է դիմումատուն ի շահ իր բողոքի (տե՛ս վերը նշված 4-րդ կետը), Դատարանը գտնում է, որ դիմումատուն կարող է պնդել, որ իր խնդրո առարկա հողատարածքի սեփականության իրավունքը չի կասեցվել այն չվերագրանցելու պատճառով: Միեւնույն ժամանակ Դատարանը չի կարող համաձայնել Կառավարության հետ, որ որոշման վիճարկումը, որն ի սկզբանե խնդրո առարկա հողատարածքը հատկացրել է գյուղական համայնքին, տեղին չէ եւ չի կարող ուղղակիորեն ազդել դիմումատուի ենթադրյալ խախտված գույքային



իրավունքների վրա: Անհասկանալի է, թե ինչ հիմքով կարող էր դիմումատուն չեղարկել հողատարածքի հետագա օտարումը երրորդ կողմին, եթե նա չփորձեր հաստատել հողատարածքի սկզբնական փոխանցման ենթադրյալ ապօրինի լինելը: Կառավարությունը նույնպես չներկայացրեց համապատասխան ներպետական նախադեպային իրավունք՝ ապացուցելու, որ առանց նման չեղարկման՝ դիմումատուի կողմից խնդրո առարկա հողակտորի նկատմամբ իր սեփականության իրավունքը գրանցելուց հրաժարվելու պարզ վիճարկումը (տե՛ս վերը նշված 3-րդ կետը) արդյունավետ միջոց կլիներ:

21. Սույն հանգամանքներում Դատարանը մերժում է 6-րդ հոդվածը կիրառելի չլինելու եւ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության առարկությունները:

22. Դատարանը նշում է, որ սույն բողոքը ո՛չ ակնհայտ անհիմն է, ո՛չ էլ անընդունելի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետում նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

23. Դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ընդհանուր սկզբունքներն ամփոփվել են Զուբաքն ընդդեմ Խորվաթիայի գործում [ՄՊ][*Zubac v. Croatia*] [GC], թիվ 40160/12, կետեր 76-79 եւ 96-99, 2018 թվականի ապրիլի 5), Կարտն ընդդեմ Թուրքիայի գործում [*Kart v. Turkey*] [GC] (թիվ 8917/05, կետ 79, ՄԻԵԿ 2009թ. (քաղվածքներ)), եւ Արոզպիդե Սարասոլաո եւ այլոք ընդդեմ Իսպանիայի գործում [*Arrozpide Sarasola and Others v. Spain*] (թիվ 65101/16 եւ մյուս 2-ը, թիվ, կետ 98, 2017 թվականի հունվարի 23):

24. Դատարանը նկատում է, որ տվյալ ժամանակահատվածում ՎԴՕ-ի 135-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում էր, որ վարչական դատարաններն իրավասու են վեճերը լուծել կառավարության նորմատիվ որոշումների համապատասխանության վերաբերյալ ավելի բարձր իրավական ուժ ունեցող նորմատիվ ակտերով (բացի Սահմանադրությունից):

25. Դիմումատուի վարչական բողոքը՝ որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ, ի վերջո չի ընդունվել ըստ էության այն հիմքով, որ նա չի

նշել ավելի բարձր իրավական ուժ ունեցող որեւէ նորմատիվ ակտ, որի հետ որոշումը ենթադրաբար անհամատեղելի է, խախտելով ՎԴՕ-ի 135-րդ հոդվածի պահանջները (տե՛ս վերը նշված 10-12-րդ պարբերությունները), չնայած այն փաստին, որ դիմումատուն հիմնվել է 1991 թվականի հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի եւ 2001 թվականի հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ կետի վրա (տե՛ս վերը նշված 4-րդ պարբերությունը)՝ պնդելով, որ կառավարությունը խախտել է իր սեփականության իրավունքը Որոշման ուժով: Միեւնոյն ժամանակ դիմումատուն նաեւ հիմնվել է Սահմանադրության 28-րդ հոդվածի եւ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վրա՝ ի պաշտպանություն իր բողոքի (նույն տեղում): Թեեւ Վարչական վերաքննիչ դատարանի այն եզրակացությանը, որ Կառավարության որոշումների ենթադրյալ հակասահմանադրականությունը վարչական դատարանների իրավասության շրջանակներում չէ (տե՛ս վերը նշված 10-րդ պարբերությունը), կարծես թե համապատասխանում է ՎԴՕ-ի 135-րդ հոդվածի 2-րդ կետին, պարզ չէ, թե ինչ հիմքերով է դատարանը հրաժարվել քննելու Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջների վիճարկվող Որոշման ենթադրյալ անհամապատասխանությունը՝ հաշվի առնելով, որ այն ժամանակ գործող խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմել եւ գերակա էին դրանց չհամապատասխանող ներպետական իրավական դրույթների նկատմամբ:

26. Դատարանը վերահաստատում է, որ դատարանի մատչելիության իրավունքը խախտված է, երբ կանոնները դադարում են ծառայել իրավական որոշակիության եւ արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին եւ որոշակի խոչընդոտ են ստեղծում դատավարության կողմի համար իր գործն ըստ էության քննել իրավասու դատարանի կողմից (տե՛ս Kart, վերը նշված, § 79): Սույն հաստատված նախադեպային իրավունքի լույսի ներքո Դատարանը գտնում է, որ վարչական դատարանների՝ դիմումատուի բողոքն ըստ էության քննելու մերժումը խախտում է նրա՝ դատարանի մատչելիության

իրավունքի բուն էությունը՝ վիճարկելու համար Կառավարության կողմից ընդունված նորմատիվ ակտը, որը ենթադրաբար խախտել է նրա գույքային իրավունքները:

27. Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-րդ կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

28. Դիմումատուն բողոք է ներկայացրել առ այն, որ իրեն ապօրինաբար զրկել են գույքից եւ հաշվի առնելով այն փաստը, որ ինքը զրկվել է դատարանի մատչելիության իրավունքից՝ Որոշումը վիճարկելու համար, խախտվել են Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված իր իրավունքները:

29. Կառավարությունը պնդել է, որ խնդրո առարկա հողակտորը չի հանդիսանում դիմումատուի «սեփականություն» Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

30. Դատարանը նշում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն դիմումատուի բողոքը սերտորեն կապված է դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով քննված բողոքի հետ, եւ որ այն չի կարող շահարկել վարույթի ելքը, եթե չլիներ իր կողմից հայտնաբերված խախտումը: Հաշվի առնելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն իր այն եզրակացությունը, որ դիմումատուին անհիմն կերպով խոչընդոտել են իր վարչական բողոքի քննումն ապահովելու գործում, եւ առանց հակասելու այն հարցին, թե արդյոք դիմումատուն տիրապետում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, Դատարանը գտնում է, որ անհրաժեշտություն չկա որոշում կայացնել նրա բողոքի վերաբերյալ սույն հոդվածի համաձայն (տե՛ս Պետկո Պետկովն ընդդեմ Բուլղարիայի գործը

[*Petko Petkov v. Bulgaria*], թիվ 2834/06, կետ 38, 2013 թվականի փետրվարի 19 եւ Ադիլովսկան ընդդեմ Հյուսիսային Մակեդոնիայի գործը [*Adilovska v. North Macedonia*], թիվ 42895/14, կետ 38, 2020 թվականի հունվարի 23):

#### ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

31. Դիմումատուն պահանջել է 28 343 եվրո՝ որպես նյութական վնասի հատուցում, եւ 12 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում: Դիմումատուն նաեւ պահանջել է 1 536 եվրո՝ որպես հատուցում Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար:

32. Կառավարությունը վիճարկել է այս պահանջները:

33. Դատարանը որեւէ պատճառահետեւանքային կապ չի տեսնում հայտնաբերված խախտման եւ ենթադրյալ նյութական վնասի միջեւ, հետեւաբար այն մերժում է այս պահանջը: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, ապա Դատարանը վերահաստատում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման համար հատուցման ամենահարմար ձեւը կլինի երաշխավորել, որ դիմումատուն, որքան հնարավոր է, լինի այն իրավիճակում, որում նա կհայտնվեր, եթե այս դրույթը չանտեսվեր ( տե՛ս վերետում հիշատակված՝ Պետկո Պետկովի գործը [*Petko Petkov* ], կետ 42): Դատարանը հետեւաբար գտնում է, որ փոխհատուցման առավել նպատակահարմար ձեւը կլինի վարույթը վերսկսել ներպետական մակարդակով, դիմումատուի պահանջի առկայության դեպքում («Պայքար եւ Հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործը [*Paykar Yev Haghtanak Ltd v. Armenia*], թիվ 21638/03, կետեր 57-58, 2007 թվականի դեկտեմբերի 20): Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ դիմումատուն կրել է ոչ նյութական վնաս, որը չի կարող բավարար չափով փոխհատուցվել վարույթի վերսկսմամբ, Դատարանը դիմումատուին շնորհում է 3 600 եվրո ոչ նյութական վնասի համար՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ:

34. Հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող փաստաթղթերը՝ Դատարանը ողջամիտ է համարում 1 090 եվրո շնորհել դիմումատուին՝ Դատարանում վարույթի իրավական ծախսերը ծածկելու համար՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում.

3. Վճռում է, որ անհրաժեշտ չէ որոշում կայացնել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ենթադրյալ խախտման վերաբերյալ.

4. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 3 600 եվրո (երեք հազար վեց հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 1 090 եվրո (հազար իննսուն եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա բոլոր հարկերը.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. Մերժում է դիմումատուի՝ արդարացի հատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2024 թվականի մարտի 26-ին՝ Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն:

Թիմ Այբը

Վալենտին Նիկոլեսկու

Նախագահ

Քարտուղարի տեղակալի  
Ժամանակավոր պաշտոնակատար